

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԳՀԱՊՁԲ-21-7/37-1**

ք. Երևան

«22» 08 2021թ.

ՀՀ Պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յուլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պնորդ, մի կողմից, և Մեդիսար ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Գաբրիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Սիակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն Էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն Էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է <http://mil.am> կայքի «Գրադարան բաժնի» ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ԵՆթաբաժնում):

**2.2 Պնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ

ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՝ ելնելով ապրանքի բնույթից և Նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն եականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն եական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

### **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1847549.9 /մեկ միլիոն ութ հարյուր քառասուկյոթ հազար հինգ հարյուր քառասուկինը ամբողջ ինը/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:

## **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՐՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումները բաժնում»)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՆԱԴՅԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՏՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության ամկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (ինայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՉՈՒ թիկունքի վարչությունը:


**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**


**ԳՆՈՐԴ**

**ՎԱՃԱՌՈՂ**

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ, ք. Երևան, Բազրևանոյի 5  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011144079  
ՀՎՀՀ 02522157  
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Մեդիսար ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան Գետառի 4/9  
Բանկ «Ինտելոբանկ» ՓԲԸ  
ՀՀ 2050022415811001  
ՀՎՀՀ 02555635  
տնօրեն

  
\_\_\_\_\_  
Ն. ՅՈՒՅՅԱՆ

  
\_\_\_\_\_  
Մ. ՍԱԲՐԻԵԼՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հավելված N 1  
N ԳՅԱՊՁԲ-21-7/37-1 պայմանագրի

Զ/Ի	անվանումը	Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը
1	Ացետոն	<p>Cas Number 67-64-1 HPLC Isocratic grade, Մաքրությունը՝ ≥99.9%, ՌԻՄ թափանցելիություն 360 նմ ոչ պակաս քան 99%, Չցնդող մնացորդը՝ ոչ ավել 5 ppm, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար, Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2,5 լ ապակյա տարա:</p>
2	Ացետոնիտրիլ	<p>Cas Number 75-05-8 Ultra HPLC grade, Մաքրությունը՝ ≥99.9%, աբսորբցիան 210 նմ ≤2 mAU, 210 նմ ≤8 mAU (drift), GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2,5 լ ապակյա տարա:</p>
3	Իզոպրոպանոլ	<p>CAS Number 67-63-0 HPLC grade Մաքրությունը՝ ≥99.9%, ՌԻՄ թափանցելիություն 230 նմ ոչ պակաս քան 79%, 270 նմ ոչ պակաս քան 99%, Չցնդող մնացորդը ոչ ավել 2 ppm, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2,5 լ ապակյա տարա:</p>
4	Տրիտոլ	<p>CAS 108-88-3 HPLC grade, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2,5 լ ապակյա տարա:</p>
5	Դիջրոմեթան	<p>Cas 75-09-2 HPLC grade, Մաքրությունը՝ ≥99.95%, Ջրի պարունակությունը՝ &lt;0.003%, Չցնդող մնացորդ՝ &lt;0.0003%, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2,5 լ ապակյա տարա:</p>
6	Նատրիումի սուլֆատ	<p>Cas 7757-83-7, ԳՕՍՏ 21458-75 համապատասխան, Մաքրությունը՝ ≥95%, Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ պոլիմերային տարայով:</p>
7	Կալիումի հիդրօքսիդ	<p>CAS Number 1310-58-3 Մաքրությունը՝ ≥99%, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 5 կգ պոլիմերային տարա:</p>
8	Զնայաթթու	<p>ԳՕՍՏ 61-75 համապատասխան, Լինի ջիմիապետ մաքուր՝ Զնայաթթվի զանգվածային մասը 99,5% ոչ պակաս, փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապաստման է կամ ապակյա 1 լ-ից փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:</p>
9	Քլորոֆորմ	<p>ԳՕՍՏ 20015-88 համապատասխան, խտությունը 20°C-ում 1473-1480գ/սմ³: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապաստման է կամ ապակյա 1 լ-ից փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:</p>
10	Իզոամիլ սպիրտ	<p>ԳՕՍՏ 5830-79 համապատասխան, Չանցվածային մասը 99%-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապաստման է կամ ապակյա 1 լ-ից փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:</p>
11	Ֆիկսանալ ադաթթվի	<p>ԳՕՍՏ 3118-77 համապատասխան, Ապրանքի գնման նմանակ յուրացանյուր միավոր (հատը) իրենից ներկայացնում է մեկ տուփ, որն իր մեջ ներառում է առնվազն 10 հատ սրվակ՝ սույն տեխնիկական բնութագրին համաձայն: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփ,</p>

		Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
12	Ֆիկսանալ նատրիումի հիդրօքսիդ	ՉՕՍՍ 4328-77 համապատասխան, Ապրանքի գնման ենթակա յուրաքանչյուր միավոր (հատը) իրենից ներկայացնում է մեկ տուփ, որն իր մեջ ներառում է առնվազն 10 հատ սրվակ՝ սույն տեխնիկական բնութագրին համաձայն: Փաթեթավորումը՝ սովորաբար չէ տուփ, Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
13	Ֆիկսանալ նատրիումի թիոսուլֆատ	ՉՕՍՍ 27068-86 համապատասխան, Ապրանքի գնման ենթակա յուրաքանչյուր միավոր (հատը) իրենից ներկայացնում է մեկ տուփ, որն իր մեջ ներառում է առնվազն 10 հատ սրվակ՝ սույն տեխնիկական բնութագրին համաձայն: Փաթեթավորումը՝ սովորաբար չէ տուփ, Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
14	Ֆիկսանալ նատրի քլորիդ	ՉՕՍՍ 4233-77 համապատասխան, Ապրանքի գնման ենթակա յուրաքանչյուր միավոր (հատը) իրենից ներկայացնում է մեկ տուփ, որն իր մեջ ներառում է առնվազն 10 հատ սրվակ՝ սույն տեխնիկական բնութագրին համաձայն: Փաթեթավորումը՝ սովորաբար չէ տուփ, Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
15	Ֆիքսանալ կալիումի հիդրօքսիդ	ՉՕՍՍ 24363-80 համապատասխան, Ապրանքի գնման ենթակա յուրաքանչյուր միավոր (հատը) իրենից ներկայացնում է մեկ տուփ, որն իր մեջ ներառում է առնվազն 10 հատ սրվակ՝ սույն տեխնիկական բնութագրին համաձայն: Փաթեթավորումը՝ սովորաբար չէ տուփ, Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
16	Ազոտական թթու	ՉՕՍՍ 4461-77 համապատասխան, Լինի քիմիապես մաքուր՝ Չանգվածային մասը 65%-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա կամ պլաստմասե 1 լ-ոց փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
17	Մագնեզիումի նիտրատ 6 ցրով	ՉՕՍՍ 11088-75 համապատասխան, Փաթեթավորումը՝ 0,5 կգ-ոց պլաստմասե կամ ապակյա փակ տարայով: Չանգվածային մասը՝ 98%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
18	Ծծմբական թթու	ՉՕՍՍ 4204-77 համապատասխան, Խտությունը 1,83 գ/ս <sup>3</sup> ոչ պակաս, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 1 լ-ոց փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
19	Էթիլ էթեր	ՉՕՍՍ 22300-76 համապատասխան, Խտությունը 99%-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, պլաստմասե կամ ապակյա 1 լ-ոց փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
20	Արծաթի նիտրատ	ՉՕՍՍ 1277-75 համապատասխան, Փաթեթավորումը՝ պլաստմասե կամ ապակյա փակ 0,1 կգ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
21	Նատրիումի քլորիդ	ՉՕՍՍ 4233-77 համապատասխան, փաթեթավորումը՝ պոլիէթիլենային պարկով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
22	Սախարոզա	Հավաստագրումը ISO 9001, Լինի քիմիապես մաքուր, Փաթեթավորումը՝ պլաստիկե հերմետիկ տուփ: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
23	Բյուրեղային յոդ	ՉՕՍՍ 4159-79 համապատասխան, Լինի քիմիապես մաքուր՝ 99,9%-ից ոչ պակաս: Փաթեթավորումը՝ պլաստմասե կամ ապակյա փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
24	Կալիումի յոդիդ	ՉՕՍՍ 4232-72 համապատասխան, Լինի քիմիապես մաքուր՝ 99,5%-ից ոչ պակաս: Փաթեթավորումը՝ լույս ջթափանցող թղթով, պլաստմասե կամ ապակյա 0,1 կգ փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
25	Կալցիումի քլորիդ անջուր	ՏՊ 6-09-4711-81 համապատասխան, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 1 կգ-ոց

		տարայով: Լինի քիմիապես մաքուր՝ 98,0%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
26	Նատրիումի նիտրիտ	ԳՕՍՏ 4197-74 համապատասխան, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 0,1 կգ-ոց տարայով: Լինի քիմիապես մաքուր՝ 99,0%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
27	Սուլֆանիլաթթու	ԳՕՍՏ 5821-78 համապատասխան, փաթեթավորումը՝ 0,1 կգ-ոց պոլիէթիլենային պարկերով: Լինի քիմիապես մաքուր՝ 99,8%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
28	Նատրիումի հիդրոկարբոնատ	ԳՕՍՏ 2156-76 համապատասխան, Փաթեթավորումը՝ ապակյա 1 կգ-ոց տարայով: Մաքրությունը՝ >99,5%ից, 1-ին տեսակի: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
29	Կալիումի սուլֆատ	ԳՕՍՏ 4145-74 համապատասխան, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 0,5 կգ-ոց տարայով: Լինի քիմիապես մաքուր՝ 99%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
30	Պղնձի սուլֆատ 5 ջրով	ԳՕՍՏ 4165-78 համապատասխան, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 0,5 կգ-ոց տարայով, Լինի քիմիապես մաքուր՝ 99,5%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
31	Ցինկի սուլֆատ 7 ջրով	ԳՕՍՏ 4174-77 համապատասխան, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 0,1 կգ-ոց տարայով, Լինի քիմիապես մաքուր՝ 99,5%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
32	Նատրիումի հիդրօքսիդ բյուրեղային	ԳՕՍՏ 4328-77 համապատասխան, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 0,5 կգ-ոց տարայով: Լինի քիմիապես մաքուր՝ 99,0%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
33	Կալիումի ջրումատ	ԳՕՍՏ 4459-75 համապատասխան, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 0,1 կգ-ոց տարայով: Լինի քիմիապես մաքուր՝ 99,5%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
34	Մագնեզիումի նիտրատ անջուր	CAS 10377-60-3 Քիմիապես մաքուր՝ 99%-ից ոչ պակաս, Փաթեթավորումը՝ ապակյա 0,5 կգ-ոց տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
35	Նատրիումի ացետատ 3 ջրով	ԳՕՍՏ 199-78 համապատասխան, Քիմիապես մաքուր՝ 99,5%-ից ոչ պակաս: Չլուծվող մնացորդ՝ 0,002%, Փաթեթավորումը՝ ապակյա 0,5 կգ-ոց տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
36	Կալիումի դեհիդրոֆոսֆատ	ԳՕՍՏ 4198-75 համապատասխան, Քիմիապես մաքուր՝ 98,0%-ից ոչ պակաս, Խտությունը՝ 2,338 գ/սլ, pH՝ 4,2-4,6, Չլուծվող մնացորդ՝ ≤0.1%, Փաթեթավորումը՝ ապակյա 1 կգ-ոց տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
37	Նատրիումի երկտեղակալված ֆոսֆատ	ԳՕՍՏ 4172-76 համապատասխան, Քիմիապես մաքուր՝ 99%-ից ոչ պակաս, Չլուծվող մնացորդ՝ 0,002%-ից ոչ ավել, Փաթեթավորումը՝ ապակյա 0,1 կգ-ոց տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:

38	Տրիս	<p>Վիստաթուղթ:</p> <p>ՏՊ 6-09-2477-78 համապատասխան, Փաթեթավորումը՝ ապակյա 0,1 կգ-ոց տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
39	Մեթիլ նարնջագույն	<p>ՏՊ 6-09-5171-84 համապատասխան, pH 3,1 (կարմիրից) - pH 4,4 (դեղին): Փաթեթավորումը՝ ապակյա 0,5 կգ-ոց տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
40	Նատրիումի բիսուլֆիտ	<p>ԳՕՍՍ 902-76 համապատասխան, Մասս զանգվածը՝ 24,0-25,5%-ից ոչ պակաս: Փաթեթավորումը՝ ապակյա տարայով, 0,3 կգ տարողությամբ: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
41	Չեպտան	<p>ԳՕՍՍ 25828-83 համապատասխան, Խտությունը 99%-ից ոչ պակաս, Ջրի պարունակությունը՝ &lt;0,01%, Չցնդող մնացորդը՝ ոչ ավել 0,0001%: Փաթեթավորումը՝ ապակյա 1 լ-ոց տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
42	Անոնիակի ջրային լուծույթ	<p>CAS 1336-21-6 Չանգվածային բաժինը՝ 25%-ից ոչ պակաս, Փաթեթավորումը՝ ապակյա 1 լ-ոց տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
43	Կալիումի հեքսացիանոֆեռատ 3 ջրով	<p>ԳՕՍՍ 4207-75 համապատասխան, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 1 կգ-ոց տարայով, Քիմիապես մաքուր՝ 99%-ից ոչ պակաս, Չլուծվող մնացորդը ջրում՝ 0,01%-ից ոչ ավել, Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
44	Չեքսան	<p>ՏՊ 2631-158-44493179-13 համապատասխան, Խտությունը՝ 99%-ից ոչ պակաս, Փաթեթավորումը՝ ապակյա 1 լ-ոց փակ տարայով, Ջրի պարունակությունը՝ &lt;0,01%, Չցնդող մնացորդը՝ ոչ ավել 0,0001%: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
45	Մեթանոլ	<p>ԳՕՍՍ 2222-95 համապատասխան, Խտությունը՝ 99,5%-ից ոչ պակաս, Ֆոսֆորավորումը՝ ապակյա 1 լ-ոց փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
46	Ացետոն	<p>ԳՕՍՍ 2768-84 համապատասխան, Խտությունը՝ 99,8%-ից ոչ պակաս, Ջրի պարունակությունը՝ &lt; 0,1%, Չցնդող մնացորդը՝ ոչ ավել 0,0005 %, Փաթեթավորումը՝ ապակյա 1 լ-ոց փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
47	Աղաթթու	<p>ԳՕՍՍ 14261-77 համապատասխան Չանգվածային բաժինը՝ 36,9%-ից ոչ պակաս, Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ապակյա 1 լ-ոց փակ տարայով: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
48	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	<p>ISO 4796 համապատասխան, Տարողությունը՝ 50 մլ ±0,1 մլ, Խցանը՝ պլաստիկ և մանեթային հերմետիկ փակվող, Ջերմակայուն՝ մինչև 140°C, Պատրաստված ջերմ և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ: Ապրանքատեսակը լինի Նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, սովորաբար չեն տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող վիստաթուղթ:</p>
49	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	<p>ISO 4796 համապատասխան, Տարողությունը՝ 500 մլ ±0,2 մլ, Խցանը՝ պլաստիկ և մանեթային հերմետիկ փակվող, Ջերմակայուն՝ մինչև 140°C, Պատրաստված ջերմ և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ: Ապրանքատեսակը լինի Նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, սովորաբար չեն տուփով:</p>

		Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
50	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	ISO 4796 համապատասխան, Տարողությունը՝ 1000 մլ ±0,2մլ, խցանը՝ պլաստիկ և մանեկային հերմետիկ փակվող, Ձերմակայուն՝ մինչև 140°C, Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ: Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, սովորաբար չեն տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
51	Լաբորատոր ապակյա բաժակ	ISO 3819 համապատասխան, տարողությունը՝ 25մլ, ճշգրտությունը ±0,5մլ: պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ, Բաժակը լինի չափիչ նիշերով Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, սովորաբար չեն տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
52	Լաբորատոր ապակյա բաժակ	ISO 3819 համապատասխան, տարողությունը՝ 50մլ, ճշգրտությունը ±0,5մլ: պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ, Բաժակը լինի չափիչ նիշերով Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, սովորաբար չեն տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
53	Լաբորատոր ապակյա բաժակ	ISO 3819 համապատասխան, տարողությունը՝ 250մլ, ճշգրտությունը ±0,5մլ: պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ, Բաժակը լինի չափիչ նիշերով Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, սովորաբար չեն տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:

**Ծանոթություն**

1. Ապրանքների ձեռք բերման անհրաժեշտ պայման է դրանց չօգտագործված լինելը:
2. Մատակարարման վայրը՝ Երևան, Արշակունյաց 73ա հասցեով:

**ՉԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Չ/հ	ՉԼՄԱՆ առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ ը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանու ր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2021թ. ոչ ուշ քան 31.08.2021թ.
1	Ացետոն	լիտր	10	7500	75000	10
2	Ացետոնիտրիլ	լիտր	2.5	9000	22500	2.5
3	Իզոպրոպանոլ	լիտր	2.5	10000	25000	2.5
4	Տոլուոլ	կգ	2.5	10000	25000	2.5
5	Դիլյորմեթան	կգ	2.5	40000	100000	2.5
6	Նատրիումի սուլֆատ	կգ	1	25000	25000	1
7	Կալիումի հիդրօքսիդ	կգ	5	30000	150000	5
8	Քացախաթթու	կգ	2	1000	2000	2
9	Զլոդոֆորմ	լիտր	30	4500	135000	30
10	Իզոամիլ սպիրտ	լիտր	5	3500	17500	5
11	Ֆիկսանալ ադաթեվի	հատ	1	5000	5000	1
12	Ֆիկսանալ նատրիումի հիդրօքսիդ	հատ	1	5000	5000	1
13	Ֆիկսանալ նատրիումի թիոսուլֆատ	հատ	1	5000	5000	1
14	Ֆիկսանալ նատրի քլորիդ	հատ	1	5000	5000	1
15	Ֆիքսանալ կալիումի հիդրօքսիդ	հատ	1	5000	5000	1
16	Ազոտական թթու	կգ	4	1500	6000	4
17	Մագնեզիումի նիտրատ 6 ջրով	կգ	0.5	1500	750	0.5


18	Ծծմբական թթու	կգ	45	1000	45000	45
19	Էթիլ եթեր	լիտր	50	5000	250000	50
20	Արծաթի նիտրատ	կգ	0.1	450000	45000	0.1
21	Նատրիումի քլորիդ	կգ	1	1000	1000	1
22	Սախարոզա	կգ	0.5	8000	4000	0.5
23	Բյուրեղային յոդ	տոն լի	0.1	40000	4000	0.1
24	Կալիումի յոդիդ	կգ	0.5	40000	20000	0.5
25	Կալցիումի քլորիդ անջուր	կգ	5	500	2500	5
26	Նատրիումի նիտրիտ	կգ	1	1500	1500	1
27	Սուլֆանիլաթթու	կգ	0.2	12000	2400	0.2
28	Նատրիումի հիդրոկարբոնատ	հատ	1	500	500	1
29	Կալիումի սուլֆատ	կգ	1	2000	2000	1
30	Պղնձի սուլֆատ 5 ջրով	կգ	1	2500	2500	1
31	Ցինկի սուլֆատ 7 ջրով	կգ	0.5	1200	600	0.5
32	Նատրիումի հիդրօքսիդ բյուրեղային	կգ	1	1000	1000	1
33	Կալիումի քրոմատ	գրա մ	200	2	400	200
34	Մագնեզիումի նիտրատ անջուր	կգ	1	1500	1500	1
35	Նատրիումի ացետատ 3 ջրով	կգ	1	2000	2000	1
36	Կալիումի դեհիդրոֆոսֆատ	կգ	1	40000	40000	1
37	Նատրիումի երկտեղակալված ֆոսֆատ	կգ	0.3	2000	600	0.3
38	Տրիս	կգ	0.5	240000	120000	0.5
39	Մեթիլ նարնջագույն	կգ	0.5	60000	30000	0.5
40	Նատրիումի բիսուլֆիտ	կգ	0.3	333333.3	99999.9	0.3
41	Հեպտան	կգ	3	15000	45000	3
42	Ամոնիակի ջրային լուծույթ	լիտր	5	1200	6000	5
43	Կալիումի հեքսացիանոֆեռատ 3 ջրով	կգ	2	100000	200000	2
44	Հեքսան	լիտր	6	3000	18000	6
45	Մեթանոլ	լիտր	3	1500	4500	3
46	Ացետոն	լիտր	3	1200	3600	3
47	Աղաթթու	կգ	10	1200	12000	10
48	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	հատ	12	3600	43200	12
49	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	հատ	12	4500	54000	12
50	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	հատ	12	6500	78000	12
51	Լաբորատոր ապակյա բաժակ	հատ	20	1000	20000	20
52	Լաբորատոր ապակյա բաժակ	հատ	20	1200	24000	20
53	Լաբորատոր ապակյա բաժակ	հատ	30	1800	54000	30


ԳԵՌԴ

ՎԱՏԱՌՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ ՊՆ ԼՏԱ գլխավոր վարչության մեծ

Մեդիսար ՍՊԸ  
տնօրեն

  
Ն. ԶՈՒՅՅԱՆ

  
Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հավելված N 2  
N ԳՅԱԴԶԲ-21-7/37-1 պայմանագրի

33 դրամ

Զ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
6	ացետոն/ դիմեթիլ կետոն/Ացետոն	33691849/1	75000	75000
7	Ացետոնհիտրիլ/Ացետոնհիտրիլ	33691860/1	22500	22500
10	իզոպրոպիլ սպիրտ/իզոպրոպանոլ	24321311/1	25000	25000
14	Լուծիչներ/Տոլուոլ	44831500/3	25000	25000
16	Լուծիչներ/Դիլյուրմեթան	44831500/4	100000	100000
17	Նատրիումի սուլֆատ/Նատրիումի սուլֆատ	24311125/1	25000	25000
22	կալիումի հիդրօքսիդ/Կալիումի հիդրօքսիդ	24311730/1	150000	150000
23	Զացախաթթու/Զացախաթթու	24321440/1	2000	2000
24	Զլորոֆորմ/Զլորոֆորմ	24321810/1	135000	135000
27	իզոամիլ սպիրտ/իզոամիլ սպիրտ	24321830/1	17500	17500
28	ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/Ֆիկսանայ աղաթթվի	33691157/4	5000	5000
29	ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/Ֆիկսանայ Նատրիումի հիդրօքսիդ	33691157/5	5000	5000
30	ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/Ֆիկսանայ Նատրիումի թիոսուլֆատ	33691157/6	5000	5000
31	ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/Ֆիկսանայ Նատրի քլորիդ	33691157/7	5000	5000
32	ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/Ֆիքսանայ կալիումի հիդրօքսիդ	33691157/8	5000	5000
33	ագոտական թթու/Ագոտական թթու	24321860/1	6000	6000
34	մազնեգիում ագոտաթթվական երկտեղակալված/մազնեգիումի նիտրատ/Մազնեգիումի նիտրատ 6 քրով	24321862/1	750	750
36	ծծմբական թթու/Ծծմբական թթու	24311114/1	45000	45000
37	Էթիլ եթեր /Էֆիր/Էթիլ եթեր	33691871/2	250000	250000
38	արծաթի նիտրատ/Արծաթի նիտրատ	33691855/1	45000	45000
39	Նատրիումի քլորիդ/Նատրիումի քլորիդ	24311360/1	1000	1000
40	Սախարոզա/Սախարոզա	24321610/1	4000	4000
41	յոդի բյուրեղներ/Բյուրեղային յոդ	33691858/1	4000	4000
42	կալիումի յոդիդ r05ca02, s01xa04, v03ab21/Կալիումի յոդիդ	33611430/1	20000	20000
43	կալցիումի քլորիդ/Կալցիումի քլորիդ անջուր	24321620/1	2500	2500
44	Նատրիումի նիտրիտ/Նատրիումի նիտրիտ	24311136/1	1500	1500
45	ագոտային ֆունկցիոնալ խմբի օրգանական միացություններ/Սուլֆանիլաթթու	24321480/1	2400	2400
46	պոլիմեթիլպիրոլիդոն, Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ, մազնեգիումի քլորիդ, Նատրիումի հիդրոկարբոնատ B05AA/Նատրիումի հիդրոկարբոնատ	33691227/1	500	500
47	Սուլֆատներ/Կալիումի սուլֆատ	24311390/1	2000	2000
48	Սուլֆատներ/Պզնձի սուլֆատ 5 քրով	24311390/2	2500	2500
50	Սուլֆատներ/Ցինկի սուլֆատ 7 քրով	24311390/3	600	600

51	Նատրիումի հիդրօքսիդ/Նատրիումի հիդրօքսիդ բյուրեղային	24311260/1	1000	1000
52	զանազան անօրգանական քիմիական նյութեր/Կալիումի քրոմատ	24311129/1	400	400
53	մազնեցիում ազոտաթթվական երկտեղակալված/մազնեցիումի նիտրատ/ Մազնեցիումի նիտրատ անջուր	24321862/2	1500	1500
54	Նատրիումի կարբոնատ/Նատրիումի ացետատ 3 ջրով	24311127/1	2000	2000
56	Ֆոսֆատներ/Կալիումի դեհիդրոֆոսֆատ	24311440/1	40000	40000
57	Ֆոսֆատներ/Նատրիումի երկտեղակալված ֆոսֆատ	24311440/2	600	600
58	ազոտային ֆունկցիոնալ խմբի օրգանական միացություններ/Տրիս	24321480/4	120000	120000
61	ազոտային ֆունկցիոնալ խմբի օրգանական միացություններ/Մեթիլ նարնջագույն	24321480/6	30000	30000
62	Նատրիումի սուլֆիտ / ծեմբաթթվային նատրիում/Նատրիումի քիսուլֆիտ	24311731/1	99999.9	99999.9
63	Լուծիչներ/Յեպտան	44831500/8	45000	45000
65	հեղուկ ամոնիակ/Ամոնիակի ջրային լուծույթ	24411400/1	6000	6000
67	Ֆիանիդներ/Կալիումի հեքսացիանոֆեռատ 3 ջրով	24311500/2	200000	200000
69	Յեքսան/Յեքսան	24321863/1	18000	18000
70	Մեթանոլ/Մեթանոլ	24321330/1	4500	4500
71	ացետոն/ դիմեթիլ կետոն/Ացետոն	33691849/2	3600	3600
72	Աղաթթու/Աղաթթու	33621766/1	12000	12000
73	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա տարրա խցանով	33791300/1	43200	43200
76	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա տարրա խցանով	33791300/4	54000	54000
77	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա տարրա խցանով	33791300/5	78000	78000
78	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա բաժակ	33791300/6	20000	20000
79	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա բաժակ	33791300/7	24000	24000
81	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա բաժակ	33791300/9	54000	54000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով


ԳՆՈՐԴ


ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ ՊՆ ԼՏԱ գլխավոր վարչության պետ

Մեդիսար ՍԴԸ  
տնօրեն

  
Ն. ՅՈՒՅՅԱՆ

  
Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝  
\_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանում ը	տեխնիկական բնութագրի համառոտ չարտդրանքը	մատակարարված ապրանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճա րման ժամկ ետը /ըստ վճար ման ժամ անա կացո ւյցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց  
\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N \_\_\_\_\_  
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) և \_\_\_\_\_  
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. \_\_\_\_\_-ին \_\_\_\_\_  
նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները. հանձնման-ընդունման

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
Ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն